

## Տ. ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԺԱՄԿՈՉՅԱՆ

Ծնվել է 1971 թ. նոյեմբերի 12-ին Էջմիածին քաղաքում, ավազանի անունը՝ Անդրանիկ:

1978-88 թթ. սովորել և ավարտել է տեղի Վահան Ռշտունու անվան № 11 միջնակարգ դպրոցը:

1989 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1993 թ. Ս. Գայանե վանքում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի:

1995 թ. ավարտել է Հոգևոր Ճեմարանը: Պաշտպանել է ավարտաճառ՝ Մովսես Ջուղայեցու «Ժողովածու ի պէտս բանասիրաց» թեմայով և արժանացել «լավ» գնահատականի:

1995 թ. նոյեմբերի 12-ին Մայր Տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Աստղիկ եպս Արիստակեսյանի:

1996 թ. Գարեգին Ա Կաթողիկոսի կողմից ուղարկվել է Գերմանիա՝ ուսանելու Հալլեի կոնսերվատորիայում, որն ավարտելուց հետո ուսումնասիրում է եկեղեցական իրավունք և միաժամանակ հոգևոր հովվի պարտականություն կատարում Գերմանիայի հայոց թեմում: